

**«ԼՂՅ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԶԵՌԵԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ»**

միջազգային երիտասարդական գիտաժողով

15-18 սեպտեմբերի 2016թ.

Արցախ (ԼՂՅ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

**«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР
(АРЦАХА):**

ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»

международная молодёжная конференция

15-18 сентября 2016г.

Арцах (НКР), г.Степанакерт

СБОРНИК МАТЕРИАЛОВ

ԱԵԳԱՄ-ՕՄՍԱ

ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ

2016

Յրատարակության Երաշխավորվել Ստեփանակերտի Մերուպ Մաշտոց
համայստանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета
Университета Месроп Мащтоц г.Степанакерта

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06

ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

Լ 657

Խմբագրական խորհուրդ

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Մանասյան**, հ.գ.դ., պրոֆ. **Հ.Ս.Ավամեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալյայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդև**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Խաչատրյան**, բ.գ.դ., պրոֆ. **Մ.Ս.Մարգարյան**, բ.գ.դ. **Ս.Մ.Ավամեսյան**, տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Քաղդասարյան**, բ.գ.թ., դոց. **Խ.Յ.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Յայրիյան**, ի.գ.թ. **Ա.Յ.Նարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Մանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

Редакционная коллегия

д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **Ա.Ս.Մանասյան**, д.п.н., проф. **Գ.Մ.Ավանեսյան**, д.и.н., проф. **Վ.Բ.Բալայն**, д.ю.н. **Վ.Բ.Գրզծեա**, д.ю.н., проф. **Ա.Գ.Խաչատրյան**, д.п.н., проф. **Մ.Մ.Մարգարյան**, д.п.н. **Ս.Մ.Մինասյան**, д.э.н., проф. **Գ.Լ.Սարգսյան**, կ.и.ն., доц. **Ն.Է.Բագդասարյան**, կ.п.н., доц. **Խ.Ը.Գալստյան**, կ.э.н., доц. **Ե.Ր.Այրիյան**, կ.ю.н. **Ա.Գ.Արյունյան**, կ.ю.н., доц. **Ա.Ա.Մանասյան**, կ.ю.н., доц. **Ս.Գ.Պետիկյան**

Լ 657 «ԼՂՅ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածում ներառված են «ԼՂՅ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборнике включены материалы международной молодёжной научной конференции «25-летие государственности НКР (Арцаха): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06

ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և
մասնագետների միավորում, 2016

ՏԵՇԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ СЕКЦИЯ ЭКОНОМИКИ

ԼՐԴ ՏԵՇԵՍԱԿԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՃԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՋԱՆԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եվգենյա ՉԱՅՐԻՅԱՆ

Արցախի պետական համալսարան,
տնտեսագիտության և ճարտարագիտության ֆակուլտետ
ֆինանսահաշվային ամբողությունում, տ.գ.թ.
evgenyahayriyan@mail.ru

Խորհրդային միության գոյության ընթացքում Լեռնային Ղարաբաղի տնտեսությունը գտնվում էր Խորհրդային Ադրբեյջանի կողմից վարած տնտեսական քաղաքականության ճնշման տակ: Այդ ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղի տնտեսությունը գործում էր հիմնականում Խորհրդային Ադրբեյջանի պահանջերին համապատասխան: Նշված ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղի բնակչությունը կազմում էր մոտ 187000 (1988թ. տվյալներով) մարդ: Խորհրդային իշխանության տարիներին տնտեսությունը հիմնականում կենտրոնացված էր գյուղատնտեսության և արդյունաբերության վրա: Հանրապետությունում (նախկին ԼՂԻՄ-ի տարածքում) 1971-1980թթ. հացահատիկի միջին տարեկան արտադրությունը կազմել է 51.8 հազ. տոննա, իսկ 1981-90թթ.՝ 62.8 տոննա: Գյուղատնտեսության համախառն միջին տարեկան արտադրանքը 1981-1990թթ. կազմել է ավելի քան 41.5 մլրդ դրամ (2006թ. գներով): Արդյունաբերության համախառն արտադրանքի 60%-ից ավելին և ընդհանուր իրացման ծավալի 45%-ից ավելին բաժին էր ընկնում գինեգործությանը: Նշված ժամանակահատվածում ԼՂ տնտեսությունը կենտրոնացված էր հիմնականում հումքի վերամշակման և արտահանման վրա, ինչը տնտեսության զարգացման համար լուրջ խոչընդոտ հանդիսացավ:

Խորհրդային Սիուրյան փլուզումից հետո Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունները տնտեսական բարեփոխումների ուղին ընտրած ԱՊՀ մյուս երկրների նման հայտնվեցին տնտեսության մեջ օբյեկտիվորեն առաջացած բարդ իննդիրների լուծման հրամայականի առջև: Տարբեր պետությունների տարածքում գտնվող ձեռնարկությունների միջև տնտեսական կապերի խզումը, սպառման շուկաների կորուստը, շրջափակումն ու պատերազմական հրավիճակը, ինչպես նաև գների ազատականացումն ու բյուջեի ֆինանսական հնարավորությունների զգալի կրճատումը խիստ բացասաբար ազդեցին մակրոտնտեսական հրավիճակի վրա: Ակսվեց ղարաբաղա-ադրբեյջանական պատերազմը, որի ընթացքում տնտեսության այս կամ այն չափով գյուղատնտեսության ունեցող

Ենթակառուցվածքները մորիլիզացվեցին պատերազմական գործողությունների մեջ:

1994 թվականի գիշադադարի հաստատումից հետո սկսվեց տնտեսական վերափոխումների շրջանը: Յիմք ընդունելով ՀՀ-ում իրականացվող տնտեսական բարեփոխումներին ուղղված ծրագրերի դրույթները և կիրառվող փորձը՝ ԼՂՀ-ում սկսվեց տնտեսական բարեփոխումներին ուղղված նպատակային ծրագրերի իրականացման գործընթացը և արդեն 1995 թվականից սկսած տեղի ունեցան տնտեսության ձևավորման ու զարգացման համար որոշ տեղաշարժեր:

Տնտեսության կայուն զարգացման համար կարևոր էր ՀՀ և ԼՂՀ միասնական բանկային համակարգի ներդրումը: 1990-ական թվականներից սկսած ԼՂՀ և ՀՀ բանկային համակարգերը գործում են կարգավորման ու վերահսկողության միևնույն հարթությունում: Արցախում ստեղծվեցին արյունաբերական, շինարարական, նախագծային ընկերությունների մասնաճյուղեր, արտադրամասեր, կոոպերատիվներ, ինչպես նաև բացվեցին ՀՀ բանկերի մասնաճյուղեր: ՀՀ և Արցախի տնտեսությունների միավորումը ոչ միայն հետապնդում էր քաղաքական նպատակներ, այլև Ենթադրում էր Արցախի սոցիալ-տնտեսական արագ զարգացում: Դայլական երկու պետությունների տնտեսական միավորումն անհրաժեշտ էր նաև տնտեսական ու սոցիալական խոշոր խնդիրների լուծման, ԼՂՀ անվտանգության, հայկական պետականության ու ազգային անվտանգության համար: Այնուամենայնիվ, ՀՀ-ում և ԼՂՀ-ում բանկային նոր մեխանիզմի կառուցումը տրվում էր շատ դժվար: Օրենսդրության բացակայության պայմաններում դեռևս պահպանվում էր նախկին խորհրդային ռուբլու միասնական գոտին, ինչպես ՀՀ, այնպես էլ ԼՂՀ տարածքում շարունակում էին կիրառվել բանկային գործունեության իրավական կարգավորման նախկին օրենսդրական և Ենթաօրենսդրական նորմերը:

Բանկային համակարգի ձևավորումը կարելի է բաժանել մի քանի փուլեր՝

1. Աղբբեջանի բանկային համակարգից բաժանման և ինքնուրույն ձևավորման փուլ.
2. Արցախի ինքնուրույն ԿԲ ձևավորումը և նախկին պետական առևտրային բանկերի մասնաճյուղերի հայաստանյան համապատասխան բանկերի հետ միաձուլման փուլ.
3. Արցախի ԿԲ կազմակերպության և ՀՀ բանկային համակարգին միաձուլման փուլ.
4. Ցրադադարից մինչև 2000թ. ընկած ժամանակաշրջանում առաջին քայլերը կատարվեցին պատերազմի ընթացքում ավերված Ենթակառուցվածքների վերականգնման ուղղությամբ: Տնտեսության կայունացման հետ մեկտեղ դրական փոփոխություններ տեղի ունեցան բանկերի և տնտեսության ճյուղերի փոխհարաբերությունների ընագագառում, բարելավվեցին բանկային համակարգի գործունեությունը բնութագրող ցուցանիշերը.

5. 2000 թվականից սկսած ԼՂՀ տնտեսությունում սկսվեց ինստիտուցիոնալ վերափոխումների նոր փուլը: Տնտեսության կայուն զարգացումը ապահովելու համար վերջինիս արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ էնթակառուցվածքների ձևավորման ու կատարելագործման կարիք էր զգացվում: Այս առումով կարևոր դրական տեղաշարժեր տեղի ունեցան բանկային համակարգի գործունեության կատարելագործման ուղղությամբ: Տնտեսության կայունացման հետ մեկտեղ դրական փոփոխություններ տեղի ունեցան բանկերի և տնտեսության ճյուղերի փոխհարաբերությունների բնագավառում: Շարունակվեց ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության մեխանիզմների կատարելագործման գործընթացը:

ԼՂՀ ժամանակակից բանկային համակարգը հանդիսանում է ՀՀ բանկային համակարգի տարր: Բանկային ոլորտը հանրապետության եզակի բնագավառն է, որտեղ գործում են ՀՀ բանկային համակարգին առնչվող օրենքներն ու Ենթաօրենսդրական ակտերը:

ԼՂՀ-ում տնտեսական բարեփոխումների իրականացման առումով կարևոր նշանակություն ունեցավ բյուջետային գործընթացի կատարելագործման մեխանիզմների ներդրումը: Կիրառելով ՀՀ-ում իրականացվող փորձը՝ բյուջետային գործընթացի կանխատեսելիության աստիճանը բարձրացնելու նպատակով հիմքեր ստեղծվեցին միջնաժամկետ ծախսային ծրագրերի մշակման և այն յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքների շրջանակներում ներառելու համար: Զևավորվեց բյուջետային հարաբերությունները կարգավորող իրավական դաշտը, ամրապնդվեցին բյուջետային եկամուտների հավաքագրման և ծախսային հատկացումների հիմնական մոտեցումներն ու մեխանիզմները:

ՀՀ-ում ձևավորված հարկային օրենսդրության հիման վրա ԼՂՀ-ում նույնպես ձևավորվեց հարկային հարաբերությունները կարգավորող հիմնական օրենսդրական դաշտը, ձևավորվեցին հարկային վարչարարության սկզբունքներն ու մոտեցումները: Այս բնագավառում, հաշվի առնելով ԼՂՀ տնտեսության հետպատերազմական ծանր տնտեսական իրավիճակը, ԼՂՀ-ում, ՀՀ-ի հետ համեմատ ձևավորվեց հարկային առավել մեղմ միջավայր, մասնավորապես հարկային դրույքաչափերի և հարկային արտոնությունների հետ կապված: 2000-2015 թվականների ընթացքում ԼՂՀ համախմբված թյուջեի եկամուտները աճել են մոտ 10 անգամ, ծախսերը՝ 8 անգամ, բյուջեի պակասորդ՝ 5 անգամ, իսկ միջավետական վարկը՝ 3,9 անգամ:¹ Նշված ժամանակահատվածում ԼՂՀ-ում իրականացվող հարկաբյուջետային քաղաքականությունը տնտեսության վրա դրսնորել է ինչպես ընդլայնող, այնպես էլ զսպող ազդեցություն, որը ձևավորվել է և

¹ www.mminfin.nkr.am 2000-2015թ. ԼՂՀ պետական բյուջե:

Եկամուտների գերակատարման, և կատարվելիք ծախսերի տնտեսման պայմաններում:

ԼՂՅ տնտեսությունում 2000-2015թթ. ընկած ժամանակահատվածում գրանցվել է անընդմեջ տնտեսական աճ: Տնտեսական բարեփոխումների և տնտեսության աշխուժացման արդյունքում տնտեսական աճի բարձր տեմպ սկսեց գրանցվել 2002 թվականից սկսած: 2000-2015թթ ընթացքում անվանական ՀՆԱ-ի տարեկան միջին աճը կազմել է մոտ 11%, սպառողական գների ինդեքսի միջին տարեկան 4.5% աճի պայմաններում: Ապրանքների արտադրության տարեկան միջին աճը կազմել է 15%, ծառայությունների արտադրությանը՝ 18%:¹ Նշված ժամանակահատվածում ՀՆԱ-ի կառուցվածքում ապրանքների արտադրության տեսակարար կշիռը զիշել է ծառայությունների արտադրությանը միջին հաշվով մոտ 5%-ով: Ապրանքների արտադրության մեջ մեծ տեսակարար կշիռ են գրադեցնում արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը:

ԼՂՅ տնտեսության աշխուժացման և զարգացման համար կարևոր իմբը են հանդիսացել վարկավորման գործընթացը: Վարկավորման ծավալների կտրուկ աճ սկսեց գրանցվել 2000 թվականից: 2000-2015 թվականների ընթացքում ԼՂՅ տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալները աճել են ավելի քան 50 անգամ: Մինչև 2005 թվականը տնտեսությանը տրամադրված վարկերի կառուցվածքում գերակշիռ մասը գրադեցնում էին արտարժույթով տրամադրված վարկերը: Այսուհետև, 2006 թվականից սկսած, տեղի ունեցավ արտարժույթով տրամադրվող վարկերի ծավալների կտրուկ կրճատում և միայն 2011 թվականին արտարժույթով տրամադրված վարկերի ծավալներին:

ԼՂՅ տնտեսության զարգացման գործում մեծ նշանակություն ունեցավ սուբսիդավորման տարբեր ծրագրերի հրականացումը: 2008 թվականից Կրօախի Ներդրումային հիմնադրամի կողմից սկսվեց հրականացվել փոքր և միջին ձեռնարկատիրության աշակեցությանն ուղղված վարկերի տրամադրման դիմաց պահանջվող տոկոսադրույթների մի մասի՝ պետության կողմից սուբսիդավորման հրականացման ծրագիրը: Այդ ծրագրի հրականացման արդյունքում 2008-2015 թվականների ընթացքում հիմնադրամի կողմից փոքր և միջին ձեռնարկատիրությանն ուղղված վարկերի համար տրամադրվել է 2 մլրդ 800 մլն ՀՀ դրամի սուբսիդիա:²

Այսպիսով, ԼՂՅ տնտեսության զարգացման համար ամենամեծ խոչընդուղ մասը է չկարգավորված հակամարտությունը: Պատերազմից հետո ԼՂՅ-ում իրականացվել են տնտեսության զարգացմանն ուղղված բազմաթիվ բարեփոխումներ, սակայն դրան զուգահեռ տնտեսության հետագա զարգացման համար առկա են հիմնախնդիրներ, որոնց լուծման միջոցով միայն տնտեսությունը կթևափոխի երկարատև կայուն զարգացման շրջան: Այդ հիմնախնդիրները կապված են ինչպես տնտեսական

¹ www.stat-nkr.am ԼՂՅ ԱՎԾ 2000-2015թթ. տարեգրքեր:

² [www.aif.am/Գործունեության տարեկան հաշվետվություններ:](http://www.aif.am/)

բարեփոխումների անընդհատ կատարելագործման անհրաժեշտության, անկատար մրցակցության, այնպես էլ քաղաքական անկայուն վիճակի հետ: Այս առումով կարևոր նշանակություն է ձեռք բերում ԼՂՀ տնտեսության ներդաշնակեցումը ՀՀ տնտեսության հետ, որը հնարավորություն կտա առավել արդյունավետ իրականացնել տնտեսության կարգավորման գործընթացը: Ներկայում ԼՂՀ-ն և ՀՀ-ն գործում են բանկային համակարգի կարգավորման միևնույն դաշտում: Բանկային համակարգը համարվում է ԼՂՀ տնտեսության համեմատաբար զարգացած ճյուղը, որը ներկայում գտնվում է անընդհատ կատարելագործման փուլում: ԼՂՀ տնտեսության մասցած ճյուղերի հեռանկարային զարգացման ապահովման երաշխիքը հնարավոր կլինի ՀՀ տնտեսությունում տեղի ունեցող դրական տեղաշարժերի ազդեցությունների արդյունավետ կիրառումը ԼՂՀ-ում:

Եվգենյա Յայրիյան

ԼՂՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԱՔԱԿԱՍՈՒԹՅԱՎԱՆ ՄԾԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԱՌԱՋԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Բանալի բառեր՝ տնտեսական բարդարականություն, բյուջե, բանկային
համակարգ, տնտեսական աճ**

Խորհրդային Միունիումից հետո Յայաստանի և Լեռնային Ղարաբաղի Յանրապետությունները հայտնվեցին տնտեսության մեջ օբյեկտիվորեն առաջացած բարդ խնդիրների լուծման հրամայականի առջև: Իրականացված բարեփոխումներին զուգահեռ տնտեսության հետագա զարգացման համար առկա են հիմնախնդիրներ, որոնց լուծման միջոցով միայն տնտեսությունը կթևափոխի երկարատև կայուն զարգացման շրջան: Այդ հիմնախնդիրները կապված են տնտեսական բարեփոխումների անընդհատ կատարելագործման անհրաժեշտության, անկատար մրցակցության, քաղաքական անկայուն վիճակի հետ: Այս առումով կարևոր նշանակություն է ձեռք բերում ԼՂՀ տնտեսության ներդաշնակեցումը ՀՀ տնտեսության հետ, որը հնարավորություն կտա առավել արդյունավետ իրականացնել տնտեսության կարգավորման գործընթացը:

Евгения Айриян

ОСОБЕННОСТИ РАЗРАБОТКИ И РЕАЛИЗАЦИИ ЭКОНОМИЧЕСКОЙ ПОЛИТИКИ НКР

Ключевые слова: *экономическая политика, бюджет, банковская система, экономический рост*

После распада Советского Союза Республика Армении И НКР оказались перед решением трудных задач, объективно возникшими в экономиках двух стран. Для дальнейшего развития экономики, параллельно с осуществленными реформами, имелись задачи, только после решения которых экономика зашла бы в период стабильного развития. Эти задачи связаны с необходимостью периодическим усовершенствованием экономических реформ и политической стабильностью. С этой точки зрения особое значение приобретает слияние экономики НКР с экономикой РА, что дало бы возможность более эффективно осуществлять процесс урегулирования экономики.

Yevgenya Hayriyan

THE SPECIFIC ASPECTS OF DEVELOPMENT AND IMPLEMENTATION OF NKR ECONOMIC POLICY

Key words: *economic policy, budget, banking system, economic growth*

After the collapse of the Soviet Union The republic of Armenia and NKR appeared in front of the imperative of solving complex problems. Along with the implemented reforms there are several problems for the future development of the economy through which solution the economy will move to a sustainable development period. These problems are related to the need for continuous improvement of the economic reforms, imperfect competition, political instability. In this regard it is very important to synchronize NKR economy with RA economy which will give the opportunity to carry out more effective economic process.